ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՍՍՀՄ-ՈՒՄ

Գ. Ս. ՍԱՐԳԻՍՈՎ

Կոմունիզմի կառուցման վեհ խնդրի իրականացումն առաջին հերթին պայմանավորված է նրա նյութատեխնիկական բազայի ստեղծման հաջողություններով, արտադրողական ուժերի հետագա հզոր աճով։ Կան նաև մի շարք այլ խնդիրներ, որոնց լուծումը, անկասկած, կնպաստի մեր առաջընթացին։

Այսօր էլ խոչընդոտ են շահամոլությունը, անկարգապահությունը, սոցիալիստական համակեցության նորմերի խախտումները, մարդկանց վարքագծում և գիտակցության մեջ առկա անցյալի մնացուկները, հանցագործությունները և այլ օրինախախտումներ։ ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի առթիվ կարդացած ճառում ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևն ասաց. «Գաղտնիք չէ, որ մեզանում մինչև օրս դեռ երբեմն իրենց զգալ են տալիս անցյալից ժառանգված, իրենց էությամբ սոցիալիզմին խորթ այնպիսի սոցիալական թարախապալարներ, ինչպիսիք են աշխատանքի նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքը, թափթփվածությունը, անկարգապահությունը, ընչաքաղցությունը, սոցիալիստական համակեցության նորմերի զանազան խախտումները։ Կուսակցությունն իր պարտքն է համարում մեր ամբողջ հասարակության ուշադրությունը հրավիրել այդ երևույթների վրա, ժողովրդին մոբիլիզացնել դրանց դեմ վճռական պայքար մղելու, դրանց հաղթահարելու համար, քանի որ առանց դրան մենք չենք կարող կոմունիզմ կառուցել»[1]։

Սոցիալական մեծ չարիք է հատկապես հանցագործությունը, որը զգալի վնաս է պատճառում պետության ու քաղաքացիների շահերին։ Դրա համար էլ հանցագործությունների դեմ անհաշտ ու վճռական պայքարը կոմունիստական շինարարության կարևորագույն խնդիրներից է։ Այդ պայքարում առավել մեծ նշանակություն ունեն այն միջոցառումները, որոնք առաջին հերթին ուղղված են հանցագործությունների պատճառների դեմ, որովհետև այս կամ այն անցանկալի սոցիալական երևույթը կանխելու համար անհրաժեշտ է նախ վերացնել այն ծնող, սկզբնավորող պատճառները։

Մասնագիտական գրականության մեջ «պատճառ» հասկացությունը բացատրվում է այսպես. «հանցագործության, որպես հասարակական երևույթի, պատճառներն այն գործոններն ու պարագաներն են, որոնք պայմանավորում ու առաջացնում են բուն հանցագործությունները»[2]։ Այս բնորոշումը կարելի է ընդունելի համարել։

Հանցագործությունները ծագում են մասնավոր սեփականության երևան գալու, հասարակությունը դասակարգերի բաժանվելու և պետության առաջացման հետ ու իրենց զարգացման գագաթնակետին են հասնում իմպերիալիզմի օրոք։ Դրանց պատճառներն արմատավորված են բուրժուական հասարակարգի

---

1 «Սովետական Հայաստան», 22. XII. 1972։

2 Ա. Թ. Թովմասյան, Սովետական քրեական իրավունք, Երևան, 1971, էջ 128—129։

բուն էության մեջ։ «Եթե փողը Օժյեի ասելով «աշխարհ է գալիս մի այտի վրա արյան բնական բծով», ապա նորածին կապիտալի բոլոր ծակոտիկներից, ոտից մինչև գլուխ, արյուն ու կեղտ է հոսում»[3]։

Բնութագրելով կապիտալիստական աշխարհը, Կ. Մարքսը նկատել է, որ այդ սոցիալական սիստեմի սրտում պետք է լինի ինչ-որ նեխած բան, որը մեծացնում է նրա հարստությունը, սակայն միաժամանակ աղքատությունը չի նվազեցնում, որտեղ հանցագործությունը ավելի արագ է աճում, քան բնակչության թիվը[4]։ Օրինակ, ԱՄՆ-ում 1960 թ. արձանագրվել է 2.014.600 հանցագործություն, 1968 թ.՝ 4.899.000։ Այսպիսով, ութ տարում հանցագործություններն ԱՄՆ-ում աճել են ավելի քան 2 անգամ։

Հոկտեմբերյան հեղափոխությունը և սոցիալիզմի հաղթանակը չախչախիչ հարված հասցրին հանցագործության գլխավոր ու հիմնական պատճառներին։ Դրա շնորհիվ հանցագործությունները մեր երկրում զգալիորեն նվազեցին և որակական լուրջ փոփոխություններ կրեցին։

Ոչնչացնելով հանցագործությունների հիմնական պատճառները (մասնավոր սեփականություն, մարդու շահագործումը և այլն), սոցիալիստական հեղափոխությունն, այնուամենայնիվ, միանգամից չէր կարող իսպառ վերացնել հանցագործություններ ծնող բոլոր պատճառները։

Կ. Մարքսը նկատում է, որ սոցիալիզմը՝ կոմունիզմի առաջին փուլը, զարգանում է ոչ թե սեփական հիմքի վրա, այլ «ընդհակառակը, նոր-նոր է ծագում հենց կապիտալիստական հասարակությունից և որն այդ պատճառով բոլոր տեսակետներից... կրում է իր վրա այն հին հասարակության դրոշմը, որի ընդերքից նա դուրս է եկել»[5]։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո մեր երկրի տնտեսությունը ծայր աստիճան քայքայված էր։ Բնակչության գերակշռող մասը անգրագետ էր և վարակված անցյալի մնացուկներով։ Խիստ ցածր էր բնակչության դաստիարակության մակարդակը։ Այդ ամենը և մի շարք այլ հանգամանքներ նկատի ունենալով՝ Վ. Ի. Լենինը նախազգուշացնում էր. «առանց ուտոպիզմի մեջ ընկնելու չի կարելի կարծել, թե տապալելով կապիտալիզմը, մարդիկ մի անգամից կսովորեն աշխատել հասարակության համար առանց իրավունքի որևէ նորմայի, բացի դրանից՝ կապիտալիզմի վերացումը մի անգամից տնտեսական նախադրյալներ չի տալիս այդպիսի փոփոխման համար»[6]։

Հին հասարակության «բնական բծերն» իրենց առանձնապես զգացնել էին տալիս սովետական իշխանության առաջին տարիներին, երբ մեծ թվով հանցագործություններ էին կատարվում։

Մեր երկրում հանցագործությունների ընդհանուր պատճառներից մեկն այն է, որ իմպերիալիզմն իր տնտեսական, գաղափարական և քաղաքական լծակներն առավել չափով օգտագործում է սոցիալիզմի դեմ, նպատակ ունենալով թուլացնել մեր երկիրը, բարոյալքել սովետական մարդկանց, նրանց դարձնել բուրժուական գաղափարախոսության գերի, սովետական մարդկանց գիտակցության մեջ ծնել հակահասարակական հայացքներ ու ձգտումներ, սեր-

---

3 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 793—794։

4 К. Маркс, Ф. Энгельс. Сочинения, т. 13, стр. 515.

5 Կ. Մարքս, Գոթայի ծրագրի քննադատությունը, Երևան, 1955, էջ 16։

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 608։

սանել պորտաբուծություն, եսամոլություն, այլասերվածություն, շահամոլություն։

Հանցագործությունների մյուս կարևոր պատճառը հասարակական գիտակցության ետ մնալն է հասարակական կեցությունից։ Հասարակական գիտակցությունը, ինչպես հայտնի է, կազմվում է քաղաքական, փիլիսոփայական, իրավական, գեղագիտական, բարոյական, կրոնական և այլ հայացքներից։ Նրա տարբեր կողմերի փոփոխումը տեղի է ունենում ոչ միատեսակ ինտենսիվությամբ։ Մարդկանց բարոյական ըմբռնումները համեմատաբար կայուն են, ավելի դժվար են փոխվում, որովհետև դրանք կապված են ազգային, տեղական, կրոնական, կուլտուրական ավանդույթների, ավանդական ընկալումների հետ։ «Մարդու հոգեբանությունը,— նշել է Լ. Ի. Բրեժնևը,— շատ ավելի դանդաղ է վերափոխվում, քան նրա կյանքի նյութական դիրքերը»[7]։ Գլխավորապես այդ պատճառով սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում չէր կարող միանգամից վերացնել հասարակական գիտակցության զարգացման անհամաչափությունը։

Թեև սոցիալիստական հասարակության կառուցման ընթացքում անցյալի շատ մնացուկներ անհետանում են, այդուհանդերձ, դրանք դեռևս ընդունակ են որոշ մարդկանց մոտ ծնելու հակահասարակական նկրտումներ։

Մարդկանց գիտակցության մեջ և վարքագծում անցյալի մնացուկներ են կոպտությունը, եսամոլությունը, արհամարհանքը հասարակության, նրա անդամների նկատմամբ, հարբեցողությունը, ձրիակերությունը, շահամոլությունը և այլն։

Ամեն մի հանցագործության հիմքում ընկած են այն կատարող անձի հակահասարակական, սոցիալապես վնասակար հայացքները, ձգտումները, որոնք անձի գիտակցության մեջ հաճախ սկսում են ձևավորվել տակավին մանուկ հասակից՝ հիմնականում կախված դաստիարակության պայմաններից։

Ճիշտ դաստիարակությունը մարդկանց գիտակցության մեջ, որպես կանոն, սաղմնավորում, ամրապնդում է սոցիալապես օգտակար, հանրօգուտ հայացքներ։

Դաստիարակության բնութագրման խնդրում ուշագրավ է ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի հետևյալ բացատրությունը. «Այստեղ փաստորեն նշանակություն ունի ամեն ինչ՝ թե՛ ընտանիքի ճիշտ մթնոլորտը, թե՛ ուսումնական պրոցեսի հմուտ կազմակերպումը, թե՛ աշխատանքային կոլեկտիվում տիրող առողջ իրադրությունը, թե՛ բնակչության՝ լավ հիմքերի վրա դրված կենցաղային սպասարկումը և թե՛ ուրիշ շատ բաներ։ Այս գործում հսկայական դեր է պատկանում, անշուշտ, կուլտուրայի, արվեստի, մասսայական ինֆորմացիայի միջոցների աշխատողներին։ Կուսակցության գաղափարադաստիարակչական աշխատանքում նրա ակտիվ օգնականները միշտ եղել են արհմիությունները, կոմերիտմիությունը և մյուս մասսայական հասարակական կազմակերպությունները»[8]։

Երբ խոսվում է դաստիարակության պայմանների մասին, ապա այն ոչ միայն և ոչ այնքան նյութականին է վերաբերում, որքան դաստիարակչական միջոցներին, ձևերի բովանդակությանը, որակին, արդյունավետությանը։ Կուսակցությունը և կառավարությունը հսկայական միջոցներ են հատկացնում

7 «Սովետական Հայաստան», 22. XII. 1972։

8 Նույն տեղում։

դաստիարակչական աշխատանքներին։ Տարեցտարի բարձրանում է նաև սովետական մարդկանց, ամեն մի ընտանիքի նյութական ապահովությունը։ Հետևապես, արդի պայմաններում դաստիարակության հարցերում վճռորոշը նյութականը չէ։

Դաստիարակության կարևորագույն բաղադրամասերն են մարդկանց հետ առնչվելու, վարվելու կամ վարվեցողության կուլտուրան, որը որոշակի պայմաններում վարքի կուլտուրա է։ Վարքի, պահանջմունքների և դրանց բավարարման կուլտուրա դաստիարակելու գործում ամենագլխավորը մարդկանց վարվելակերպի համապատասխան նորմերի ուսուցումն է։ Սակայն, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, քիչ չեն դեպքերը, երբ վարվելակերպի նորմերն իմանալով հանդերձ, այս կամ այն անձն, այնուամենայնիվ, շրջանցում է դրանք։ Դա բացատրվում է նրանով, որ այս կամ այն նորմի, կանոնի իմանալը դեռևս դրանց անթերի կատարում չէ։ Անհրաժեշտ է ոչ միայն իմանալ այդ նորմերը, կանոնները, ինչպես նաև օրենքները, այլև կյանքում գործել դրանց համապատասխան։ Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ այդ նորմերով ու կանոններով, ինչպես նաև օրենքներով ղեկավարվելը դառնա կենսական պահանջ, սովորություն, որ մարդիկ համոզվեն դրանց անհրաժեշտության, կարևորության ու պարտադիր լինելու մեջ և, որ գլխավորն է, կյանքում դրանք պահպանեն ոչ թե արտաքին ճնշման տակ, այլ ներքին, բարոյական, հոգեկան հակումներից, պահանջմունքներից ելնելով։ Սա կոմունիստական կուլտուրականության ամենաէական հատկանիշն է։ Միայն այս դեպքում կարելի կլինի ասել, որ տվյալ մարդն ունի համապատասխան կուլտուրական մակարդակ, հետևապես՝ նաև դաստիարակվածություն։

Այդպիսի մակարդակ ապահովելը վճռական նշանակություն կունենա հանցագործությունների պատճառները վերացնելու գործում։

Հետազոտությունները ցույց են տվել, որ անչափահաս հանցագործների մեծ մասը «դաստիարակվել» են հարբեցողության, կռվարարության, դաժանության, ձրիակերության ընտանեկան պայմաններում։ Հատկանշական է, որ ներկա պայմաններում ծանր հանցագործություն կատարած անչափահասների 25%-ի ընտանիքի այս կամ այն անդամը ունեցել է դատվածություն։ ՌՍՖՍՀ մի շարք մարզերում 1965—1966 թթ. կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կրկնահանցագործների մեծ մասը, որոնք առաջին հանցանքը գործելիս եղել են անչափահաս, «դաստիարակվել» են նման անբարենպաստ ընտանեկան պայմաններում։ 15—17 տարեկան հասակում հանցագործություն կատարած պատանիների մեջ ծնողներից զրկվածների տեսակարար կշիռը 2 անգամ ավելի շատ է, քան այդ հասակի բոլոր անձանց մեջ։ Անչափահաս հանցագործների մի զգալի մասը ծնողների հսկողությունից դուրս մնացած պատանիներ են, որոնցից շատերը կամ թողել են դպրոցը, կամ երկտարեցիներ են։ Հանցագործություն կատարած անչափահասների թվի մեջ սովորողները 3 անգամ քիչ են, քան բոլոր աշխատող պատանիների մեջ։ Անչափահասների մեջ ինչքան մեծ է աշխատանքային ստաժը, այնքան քիչ է հանցագործություն կատարած պատանիների թիվը[9]։

Հետևությունների և եզրակացությունների համար հիմք կարող են ծառայել ստորև բերվող տվյալները, որոնք ստացել ենք 1969—1970 թթ. Հայկական

[9] «Криминология», М., 1968, стр. 319, 346, 347.

ՍՍՀ-ում խուլիգանություն կատարած անձանց մարդաբանական (դեմոգրաֆիկ) և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրության ընթացքում։ Դրանց 55%-ը ունեցել է միայն տարրական կամ մինչև VII դասարանի կրթություն, մինչդեռ հանրապետության չափահաս ազգաբնակչության մեջ այդպիսի ցածր կրթական մակարդակ ունեցող բոլոր քաղաքացիների տեսակարար կշիռն անհամեմատ փոքր է։

Ուսումնասիրված անձանցից ոչ մեկը գեղարվեստական ինքնագործունեության խմբակ չի ընդգրկվել, գեղարվեստական գրականության ընթերցմամբ զբաղվել է նրանց միայն 17,9%-ը, թերթեր, ամսագրեր ընթերցել է միայն 23,5%-ը, իսկ թատրոններ, համերգներ և ցուցահանդեսներ հաճախել 11,7%-ը։ Բացի այդ, մեր ուսումնասիրած հանցագործների 40%-ը եղել է հարբեցող, խաղամոլ և այլն։ Նրանց 70%-ը շրջապատին վերաբերվել է արհամարհանքով կամ անտարբերությամբ։ Կոլեկտիվիզմը պարզորոշ արտահայտվել է ուսումնասիրված հանցագործների միայն 11,8%-ի մոտ, մինչդեռ անհատապաշտություն է ցուցաբերել 35,3%-ը։ Բարությունը պարզորոշ կերպով արտահայտվել է ուսումնասիրված հանցագործների միայն 16%-ի մոտ, իսկ չարախնդությունը՝ 35%-ի մոտ։ Համեստությունը պարզորոշ կերպով արտահայտվել է միայն 6%-ի մոտ, մինչդեռ սանձարձակությունը, անհամեստությունը՝ 58%-ի մոտ և այլն։ Ուսումնասիրված հանցագործների 13%-ը ոչ մի տեղ չի աշխատել։

Ինչպես նշեցինք, հանցագործների կրթական մակարդակը, որպես կանոն, զգալի չափով ցածր է հանրապետության ազգաբնակչության կրթական մակարդակից։ Սակայն կրթական մակարդակը սերտորեն կապված է դաստիարակվածության, կուլտուրականության մակարդակի հետ, որը հաճախակի անտեսվում կամ լռության է մատնվում։ Հաճախ մարդկանց կուլտուրական և դաստիարակվածության մակարդակը զգալի չափով ետ է մնում նրանց կրթականից։ Դա բացատրվում է նրանով, որ որոշ դպրոցներ և ուսումնական այլ հաստատություններ մեծ տեղ տալով գիտելիքներին, անհրաժեշտ չափով չեն զբաղվում նաև պատանիների և երիտասարդների դաստիարակության հարցերով։ Ուսումնասիրությունը պարզում է, որ 1969—1970 թթ. հանրապետությունում խուլիգանություն կատարած անձանց 22%-ը ունի լրիվ միջնակարգ, թերի բարձրագույն, երբեմն նույնիսկ բարձրագույն կրթություն։ Ուստի դպրոցներում և ուսումնական այլ հաստատություններում, ինչպես նաև ընտանիքում դաստիարակչական աշխատանքի որակի, մակարդակի ու արդյունավետության բարձրացումը հանցագործության պատճառների վերացման կարևորագույն ուղիներից է։

Նշված ժամանակամիջոցում ՀՍՍՀ-ում խուլիգանություն կատարած անձանց 76%-ը հասարակական կյանքին չի մասնակցել։ Սա մի կողմից վկայում է այն մասին, որ հասարակական կյանքին մասնակցելու փաստը հակակրիմինոգեն դեր է կատարում, մյուս կողմից՝ աշխատավորական կոլեկտիվները, հասարակական կազմակերպությունները դեռևս պատշաճ հոգ չեն տանում նրանց հասարակական կյանքին մասնակից դարձնելու և այդպիսով դաստիարակչական աշխատանքի ոլորտն ընդլայնելու ուղղությամբ։ Հանցագործներից յուրաքանչյուր երրորդը նախքան հանցանք գործելը թույլ է տվել կարգապահական խախտում, ինչ-որ զանցանք։ Սակայն նրանց դաստիարակման

խնդիրներով հասարակական կազմակերպությունները, աշխատավորական կոլեկտիվները, հիմնարկությունների և ձեռնարկությունների ղեկավարներն անհրաժեշտ ձևով ու խորությամբ չեն զբաղվել։ Արդյունքը եղել է այն, որ զանցանք գործած անձինք ոչ միայն չեն դատապարտվել, այլև հանցանք են գործել։

Հանցագործության պատճառների թվում կան նաև սոցիալական որոշ գործոններ։ Այսպես, օրինակ, ժողովրդական սպառման որոշ ապրանքներ այնքան չեն արտադրվում, որ բավարարեն բնակչության պահանջարկը։ Սա իր հերթին նպաստում է այնպիսի հանցագործությունների դրսևորմանը, ինչպիսիք են հափշտակությունը, սպեկուլյացիան, պաշտոնական դիրքի չարաշահումը, կաշառակերությունը և այլն։ Գաղտնիք չէ, որ երկրի ազգաբնակչության մի մասի նյութական բարեկեցությունը համեմատաբար ցածր է և դեռևս չի վերացել գյուղի և քաղաքի, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի տարբերությունը։

Այս և նման սոցիալական գործոնները կոմունիստական շինարարության ընթացքում անպայման կհաղթահարվեն, սակայն արդի պայմաններում հանցագործությունների պատճառականության մեխանիզմում դրանք որոշակի դեր են խաղում։

Սովետական մարդկանց նյութական պայմանների էլ ավելի բարելավումը, բնակարանային խնդրի վերջնական լուծումը, լայն սպառման առարկաների արտադրության այնպիսի ծավալի ու մակարդակի ապահովումը, որը հնարավորություն կտա լրիվ կերպով բավարարելու բնակչության պահանջարկը, ձեռնարկությունների, հիմնարկությունների ու կազմակերպությունների աշխատանքներում տեղ գտած վրիպումների վերացումը, մարդկանց գիտակցականության աճը մեր երկրում հանցագործություններն իսպառ վերացնելու ամենաարդյունավետ միջոցներից և ուղիներից են։ ՍՄԿԿ Ծրագրում ասված է. «Աշխատավորների նյութական ապահովության, կուլտուրական մակարդակի և գիտակցականության աճը բոլոր պայմաններն ստեղծում է, որպեսզի արմատախիլ արվի հանցագործությունը»[10]։

Սովետական քրեաբանությունը տնտեսական, նյութական գործոնը որպես հանցագործության անմիջական պատճառ է դիտում միայն այն դեպքում, երբ անձը այս կամ այն հանցագործությունը կատարում է նյութականից դրդված։ Սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հափշտակությունների համար դատապարտված անձանց 44%-ը այդ քայլին դիմել է ոչ թե տնտեսական կարիքից ելնելով, այլ դրամ, թանկարժեք իրեր դիզելու նպատակով, 40%-ը՝ իրենց գերաճած, ուռճացած պահանջմունքները բավարարելու համար։

Հափշտակության մնացած դեպքերը. որպես կանոն, կատարվել են այս կամ այն կենսական պահանջմունքը բավարարելու համար։

Հանցագործությունների պատճառներից են հարբեցողությունը և ալկոհոլիզմը։ Գիտությունը վաղուց է ապացուցել, որ ոգելից խմիչքները կործանարար կերպով են ներգործում մարդու հոգեկան աշխարհի, նրա գիտակցության, կամային պրոցեսների վրա։ Ֆ. Էնգելսը գրել է, որ հարբեցողությունը «կործանարար ներգործություն է ունենում... իր զոհերի հոգու վրա»[11]։

---

10 «ՍՄԿԿ Ծրագիրը և կանոնագրությունը», Երևան, 1964, էջ 129։

11 К. Маркс, Ф. Энгельс, Сочинечия, т. 2, стр. 337.

Ոգելից խմիչքը մարդու մեջ ճնշում է խղճի ու բարոյականության զգացմունքը։ Հարբեցողությունը զգալիորեն նեղացնում, սահմանափակ է դարձնում մարդու մտավոր հետաքրքրությունները, կոշտացնում զգացմունքն ու բարքերը և ակտիվացնում ու ուժեղացնում անհատապաշտական, հակահասարակական ցանկություններն ու ձգտումները։ Ծնողների հարբեցողությունը չափազանց կործանարար ազդեցություն է ունենում երեխաների ու դեռահասների վրա, երբեմն անուղղելի կերպով խեղում, բարոյապես այլանդակում երեխաներին։

Հարբեցողությունը, ալկոհոլիզմը վերջին հաշվով բացասաբար են ազդում անձնավորության ձևավորման վրա, նպաստում են նման անձանց գիտակցություն ներթափանցելու այնպիսի անհատապաշտական, հակահասարակական, սոցիալապես վնասակար հայացքներ ու ձգտումներ, որոնք, ինչպես նշեցինք, դառնում են հանցագործությունների պատճառ։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայկական ՍՍՀ-ում խուլիգանության բոլոր դեպքերի կեսից ավելին կատարում են հարբած մարդիկ[12]։

Մենք կանգ առանք ՍՍՀՄ-ում հանցագործությունների գրեթե բոլոր ընդհանուր պատճառների վրա։ Դրանցից ոչ մեկը յուրահատուկ, բնորոշ չէ բուն սոցիալիզմի էությանը, նրա անմիջական ծնունդը չէ, այս կամ այն չափով ու ձևով չի պայմանավորված մեր երկրի տնտեսության սիստեմով կամ հասարակարգով, ինչպես այդ տեղի ունի կապիտալիստական ամեն մի երկրում։

Կոմունիստական շինարարության նորանոր հաջողությունների, պետական ու աշխատանքային կարգապահության, սոցիալիստական օրինականության հետագա ամրապնդման, հիմնարկությունների, ձեռնարկությունների, գերատեսչությունների ղեկավարների պատասխանատվությունը ստանձնած գործի հանդեպ ավելի բարձրացնելու շնորհիվ, որի համար մեր կուսակցությունն ու կառավարությունը մշտապես ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումներ, սոցիալիզմի և կոմունիզմի սկզբունքներից կատարվող սուբյեկտիվ շեղումները, սխալներն ու վրիպումները անպայման կկանխվեն, կվերանան։

Մեր երկրում ոչ միայն նվազում է հանցագործությունների, հատկապես նրա առավել վտանգավոր տեսակների թիվը, այլև իրական նախադրյալներ կան դրանք իսպառ վերացնելու համար։ Կոմունիզմի լիակատար հաղթանակը կվերացնի հանցագործությունները և հասարակությանը կազատի սոցիալական մեծ ու դարավոր այդ չարիքից։

Այս պատմական խնդրի լուծման գործում առաջնայինը, անշուշտ, այն պատճառների վերացումն է, որոնցով պայմանավորված են հանցագործությունները։ Սակայն այդ ասպարեզում մեծ է նաև կոնկրետ հանցագործությունների դեմ վճռական, անգիջում, անհաշտ պայքարի դերը, որի հաջողությունը կոմունիստական բարոյականության հաղթանակի նախապայմաններից մեկն է։ Իսկ կոմունիզմ կարող են կառուցել միայն կոմունիստական բարոյականության տեր մարդիկ։ Ինչպես նշվել է ՍՄԿԿ XXIV համագումարին ՍՄԿԿ Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ, «չի կարող կոմունիստական բարոյականության հաղթանակ լինել, առանց վճռական պայքար մղելու նրա այնպիսի հակապատկերների դեմ, ինչպիսիք են շահամոլությունը, կաշառակերությունը, պորտաբուծությունը, զրպարտությունը»[13]։

[12] Г. С. Саркисов, Предупреждение нарушений общественного порядка, Ереван, 1972, стр. 98—99.

[13] «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 112։

Նման պայքարի հաջողության երաշխիքներից մեկը պատժի անխափանելիության լենինյան սկզբունքի լիակատար կենսագործումն է։ Գաղտնիք չէ, որ նկատելի թվով հանցագործների դեռևս հաջողվում է այս կամ այն եղանակներով խուսափել պատժից (հանցագործությունների, հատկապես հափշտակությունների, կաշառակերության, գների խախտման, թերակշռման մի զգալի մասը չի բացահայտվում ու չի գրանցվում առհասարակ. որոշ դեպքերում քրեական գործերը կարճվում են միայն այն պատճառով, որ քննությամբ անհրաժեշտ ապացույցներ ձեռք չեն բերվում)։ Դա մի կողմից ավելի սանձարձակ է դարձնում պատժից խուսափած հանցագործներին ու հաճախ նրանց դրդում կատարելու ավելի ծանր հանցագործություններ, իսկ մյուս կողմից՝ բնակչության որոշ շրջաններում ստեղծում է անպատժելիության թյուր կարծիք, իսկ դա անկայուն տարրերի մի մասին մղում է հանցագործության։

Վերջին տարիներին կուսակցությունն ու կառավարությունը բազմաթիվ նոր միջոցառումներ են մշակել հանցագործությունների դեմ մղվող պայքարն էլ ավելի վճռական ու արդյունավետ դարձնելու, հարբեցողությունը վերացնելու համար։ Այդ միջոցառումների անշեղորեն կենսագործումն, անշուշտ, կտա ցանկալի արդյունք, նոր աստիճանի կբարձրացնի օրինախախտումների դեմ մղվող պայքարը և էլ ավելի կամրապնդի սոցիալիստական օրինականությունը։

ПРИЧИНЫ ПРЕСТУПНОСТИ В СССР

Г. С. САРКИСОВ

Резюме

Преступность — социальное и исторически обусловленное явление. Возникнув в условиях эксплуататорского строя, она достигает своего наивысшего уровня при империализме. Это обусловлено самой сущностью буржуазного строя, в основе которого лежит частная собственность на орудия и средства производства и обусловленные ею эксплуатация человека человеком, бесправие трудящихся, их социальное и политическое угнетение.

Победа социализма в СССР нанесла сокрушительный удар по главным причинам преступности. В результате преступность в СССР резко сократилась.

Тем не менее преступность в СССР не искоренена. Общими ее причинами являются: противоборство двух диаметрально противоположных систем — капитализма и социализма и связанная с ним идеологическая диверсия империализма; остатки прошлого в сознании и поведении многих людей, обусловленные отставанием общественного сознания от общественного бытия, недостатками в воспитательной работе; одной из причин преступности являются также пьянство и алкоголизм.

Эти и другие причины не характерны и не присущи сущности социалистического общества. Однако это не означает, что в современных

условиях в СССР нет каких-либо предпосылок для преступности. Эти предпосылки чаще всего являются следствием ошибок и упущений, имеющих еще место в деле планирования, воспитания, организации досуга людей, торговли, распределения общественного фонда и т. д. Перечисленные и др. недостатки и упущения не только не являются следствием социалистического строя общества, но, наоборот, представляют из себя субъективные отклонения от принципов социализма. Партия и правительство постоянно принимают решительные меры с целью устранения и предупреждения этих отклонений.